

Քարեպաշտօն Մանրածախք Ախալցիսց	5	70
Քարեպաշտօն Օղալաձառք Ախալցիսց	15	
Քարեպաշտօն Սուրճալաձառք Ախալցիսց	3	
Քարեպաշտօն Կտաւագործք Ախալցիսց	2	42
Քարեպաշտօն Սառաճք Ախալցիսց . . .	3	
Քարեպաշտօն Մինձիք Ախալցիսց . . .	2	
Քարեպաշտօն Ռոմնաղիբը Ախալցիսց . . .	5	
Մարտիրոս Ըստահմաթեան	1	
Յակոբ Գրիգորեան	25	
Յարութիւն Գալուստեան	40	
Մարտիրոս Պետրոսեան	20	
Յովհաննէս Քաշորեան	60	
Պօղոս Գալուստեան	50	
Մարգիս Յարութիւննեան	1	
Սողոմոն Ստեփաննեան	50	
Յովհաննէս Մկրտչեան	50	
Յարութիւն Արելեան	1	
Յովհաննէս Փիլիպնեան	1	
Աղա Փիլինեան	25	
Գէորգ Ստեփաննեան	70	
Գրիգոր Մատմէռսեան	50	
Գրիգոր Խաչատրեան Բենկլեանց	20	
Երեք անձինք	1	
Յակոբ Սահակեան	80	
Արքահամ Զուլամեան	1	
Ստեփանոս Սարգսեան	30	
Քարեպաշտօն Իրուտք Ախալցիսց . . .	2	50
Քարեպաշտօն Մասծախք Ախալցիսց . . .	5	
Քարեպաշտօն Հիւսք Ախալցիսց . . .	8	
Աւետիս Փչընեան	30	
Քարեպաշտօն Պղնձագործք Ախալցիսց	4	

(Եպիստեմէնէւ)

ԴՊԲԵՎԱՆՔ ԵՐՆՁԱԿՈՒ Ս. ԿԱՐԵՊԵՏԻ
Ա.ԱՆՈՒՑ

ԽԱՅՔԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՐԴԱԿԱ Ա.ԽԱՅՔԱԳՐՈՒԹՅԱ:

Եթէ միանգամ տրամաբանօրէն ազգաց և ազանց անցեալի և ներկայի վերայ ուշք դարձնենք՝ կտեսնենք անշուշտ պարզ կերպով թէ նոցա իւրաքանչիւրը ունեցած է և ունի՝ իւր ազգայնութեան տեսողութեան վերաբերմամբ բնական և բա-

րոյական կապեր, որոնք իւրեանց ընդարձակ նշանակութեամբ նոյն հասարակութեան կենաց ընթացքին կամ վեսասակար և կամ օգտակար են եղած: Մի ագդի բնական կապերը քաջ ըմբռնելու համար՝ հարկ է աշխարհագրական զիտութիւնը իւր մասներով զիտենալ՝ հետեւալէս և տեղեակ ըլլալ ընդհանրական պատմութեան:

Արդ այս զիտութեանց մէջ նշանակութիւն և համբաւ ստացող անձինք՝ շատ անգամ առարկած են թէ,, Հայաստանը մարդկային ազգի պատմաբանական կեանքին մէջ մի շատ երեկե զործք չկատարեց և ոչ մի ժամանակ ալ կատարեալ և հզօր տէրութիւն չկազմեց,,,: Այս կէտը մէնք խոչհեմ և հեռատես ձեռով նկատելով կարող ենք անվեհեր ասել թէ դորան առիթն մեր Հայրենիաց բնական գրութիւնն կամ կապն է եղած: Հայկական կեանքը գեթ մասնաւոր կերպով ուսումնասիրող ամեն անհատ զիտէ թէ մեր բուն Հայրենիքը մի բարձրաւանդակ երկիր է Կովկաս, Տաւրոս և Կորդուաց լեռներւն շրջապատեալ որոնք իրանց՝ այլևայլ Ճիւղերով՝ այս աշխարհքին մէջ միանալով՝ ոչ միայն Սահյու ամենանշանաւոր բարձրաւանդակութիւնը կ'կազմեն, հապա և այս երկիրը բոլորովին միմեանցից ջոկ մասերի կ'բաժաննեն. որ մէջ նշանակութիւն ունեցաւ մեր պատմաբանական կեանքին մէջ:

Ասիայումը Ասորեստան, Բաբելաստան, Մարաստան, նոյնպէս Եզիդոտոս ոչ միայն Հայաստանի նման զատուած չէին բնական անջրապետներով իւրեանց մէջ: Այլև ազատ էին օտարների ազգեցութիւններէն: Ուրեմն բնական և շատ յարմար էր թէ այն երկրները պիտի կազմեին հզօր տէրութիւններ, ինչպէս և եղան չին դարերին մէջ, Իսկ մեր Հայրենիքն այս աշխարհներին հակառակ դըրութիւն ունենալով այսինքն իւր մէջ բաժանեալ և այլ և այլ ազգաց ոտից կոխան լինելու վիճակին ենթաբերեալ լինելով ոչ միայն կատարեալ միութիւն չունեցաւ, հապա և խաղաղ ու անզորը կեանք ալ չ'վարեց:

Հարկ է միանգամ պատմութեան վերայ ուշք դարձնել: Ի՞նչ կ'տեսնենք: Այս թէ ամենայն ժամանակ համայն հզօր տիրապետների առաջին բացուած երկիրը՝ մեր Հայրենիքն է եղած: Ուստի

և իւրաքանչիւր խորագէտ քաղաքականութիւն և կառավարութիւն դէպի իւր նպատակները դիւրութեամբ հասնելու համար՝ կամեցել է նախապէս նորան (Հայաստանին) տիրապետել որն որ շատ ալ հեշտ է եղած քանի որ նա՝ (տիրապետել կամեցողը) մի միաւորեալ ազգային դիմագարձ զօրութեան չ'է հանդիպած։ Մեր ասածին ապացոյց չ'է արդեօք մեր հարեւան հին ազգաց ընթացքը՝ Հայրենիքնուս նկատմամբ։ Միթէ զարմանալու բան է Պարսկաստանի թուլութեանէն և տկարութիւնէն օգուտ քաղելով՝ նորան տիրապետել կամեցող Աղեքսանդրի առաջին գործքը՝ Հայաստանին տիրելն լինելը։ Կամ յարմար չ'է արդեօք Հռովմայեցիք իւրեանց զօրութիւնը Պարսկաստանին վիրայ տարածելու համար, մեր Հայրենիքն ընկճել կամելին, բնական չ'է արեւելան կայսերաց Պարսկաստանէն ազատ ուլալու համար Հայաստանի վիրայ աչք նետենին, և հակադարձը, Ուստի այս նկատմանքներէն յայտնի է որ Հայաստանը Ասիական հզօր տիրապետների մանաւանդ Պարսկաստանի և Յունաստանի նկատմամբ մի միջնակէ (ՊՍԿՐԵՏԵ) եղած, երբեմն մէկէն հեռանալով միւսին մերձենալու. երբեմն ալ մէկալէն ի բաց մեկնելով միւսին յպելու։

Ահաւասիկ Հայաստանը իւր բնական զրութեամբ այս հանգամանքների և պարագաների մէջ զըտնուելով չ'կարողացաւ Ասիոյ միւս ազգերի նման քաղաքական զօրել նշանակութիւն ունենալ։ Ամեն պակասութիւն շատ անգամ մի ուրիշ առաւելութեամբ կ'ծածկուի։ Մեր հին կենաց այս թերութիւնը ըստ ինձ՝ միայն մոտացական կենաց յառաջադիմութեամբ կարելի էր ըսբօղել. բայց այս բաղլը հին գարերին մէջ ոչ թէ միայն մենք, հապա և համայն ազգերն չ'կրցան ձեռք զցել. ուստի մենք եղանք այն՝ ինչ որ բնական էր։ Սակայն աստ հարկ է ասել թէ մեր Հայրենիքը մարդկային ազգի պատմաբանական կենաց մէջ ուրիշ պատճառներով, այլ դէպեքտով, ունեցած է իւր մէծ կշեռը, զօր այստեղ բացատրելը՝ և առաջ բերելը թէ այս յօդուածիս նպատակէն դուրս գիտեմ և թէ իմ կարողութիւններէն վեր կ'խոստովանուեմ։ Ուստի թողնելով այս կէտը՝ կանցնեմ ազգերի բարցական շաղկապների դիմամար մի

քանի խօսք ասել, զօր կաշխատեմ որքան կարելի է ըստ իմ կարողութեան պարզել և բացատրել։ Սակայն նախ քան սորան վերայ խօսելս անհրաժեշտ կ'սեպեմ առարկել թէ ինչ որ մեր Հայրենեաց՝ բնական կապը մեղ համար վատ կամ լաւ կողմունք նոյնպէս ուրիշ ազգայնք իւրեանց համար։

Արդ՝ այս կէտի վերաբերմամբ գրող և սորան մէջ համբաւ ստացող անձինք շատ անգամ՝ առարկած են թէ ։ Մի ազգի բարցական կապերի հիմը և խարիսխը երեք կենսատու տարեցք հարկ են ըլլալու. լուսաւորութիւն, բարցական կրթութիւն և նիւթական կենաց ապահովացնելու միջոցներ, որոնց մի հայեացքով, մի աշխատանօք և ճըգամբք պիտոյ է առաջ վարել, թէ ո՞րչափ և որ աստիճանի ճշմարտութիւն կայ այս խօսքերին մէջ թող ընթերցողք իրանք խորհնեն. իսկ ես փոքր ինչ կ'պարզեմ այս միտքը։

Լուսաւորութիւն ասելով իրան մէջ կ'պարունակէ մարդկութեան կենաց յատկացածի բնականը, զօր ուրիշ խօսքով կարող ենք ասել նորապագային, ընկերական, քաղաքական և մասաւորական կէտերը, որոնք որչափ որչափ զարգացած ըլլային մի ազգի մէջ, այնչափ նցյն ազգութիւնը կազմող անհատները իւրեանց պարտականութեանց կատարելը կ'սիրէին և կ'յարդէին առանց օրինաց ստիպման։ Իսկ բարցական կրթութիւն ասելն, զօր այլ ձեռով կարող ենք ասել հոգեկան կամ կրօնական, որուն հիմքն է Արարիչը։

Մի ազգ առաջ գնալու համար եղան անձինք, որոնք կարծեցին բաւական է նցյն ազգին մէջ մարմնաւոր լուսաւորութեան ըլլալը. եթէ այդ միացած ըլլայ կառավարութեան, ճարտարութեան, քաղաքականութեան և գրականութեան հետ։ Սակայն այս միտքը թշու և խախուտ է, ինչպէս ժամանակը և փորձը յայտնի կացուցին մտածող աշխարհին Ի՞նչ եղաւ Հռոմեական ահազին կայսերութիւնը, որուն մէջ նիւթական լուսաւորութիւնը բարձր տեղ կ'բանէր։

Անշուշտ կործանուեց և կորաւ քրիստոնէից բարցական լուսաւորութեանէն կամ զօրութեանէն։

Արդ՝ այստեղ մի հարց առաջ կ'գայ թէ քրիստոնէից բարցական ուսաւորութիւնը եթէ այնքան

զօրեղ էր որ իւր մեծ ուժով տապալեց աչաղին Հռովմէական մարմնական մեծութիւնը Ի՞նչի ուրիմն ինքն ալ այնկան գարեր ամենայն օրինաւորութեամբ չկարողացաւ ազգեր և ժողովրդներ կառավարելու և առաջ տանելու։ Այս հարցը դէմ մասնաւոր կերպով լուծելու և հասկանալի կացուցանելու համար հարկ է ուշադրութիւն դարձնել քրիստոնէութեան առաջին գարերին վրայ։

Քրիստոնէութեան չորրորդ գարից սկսած Յիսուսի բարոյականը մինչեւ այդ ժամանակը միմեանցից շատ հետի եղած ազգերին մէջ աղնիւ զբացմունք, սուրբ հաւատ, հաստատ յոյս, սէր և համոզումներ շնչելով՝ նորանց կատեց ու կաշկանդեց միմեանց հետ, տիրելով և իշխելով բարոյապէս նորանց վերայ։ Սակայն այս կէտը ուշ թէ շուտ պիտի չունենար իւր տեղութեամբ բնչպէս և եղաւ. բայտ որում կամաց կամաց ժամանակների սահելը, ազգերի տեղափոխուելը, սերունդների այլ և այլութիւնը. Հին թագաւորութեանց կործանուելը. նորերի վերականգնելը, այլեայլ ժամանակ եղած զիւտերը և այլ բիւր գէպքեր և հանգամանքներ, ցցց տուեցին պարզ կերպով աշխարհքին թէ՝ բարոյական լուսաւորութեան մի տարր կ'պակսի, որ է մուտարական կենաց զարդացնելը, Ուստի այս փորձէն Արևմուտք արևելքէն շուտ դաս առնելով՝ ամենայն ճիղը թափեց ձեռք բերելու զայն, հետեւապէս մեծամեծ զոհեր տալին յետ եր իւր բարոյական լուսաւորութեան հետ միացրեց մոացական կենաց զարդացնելու յառաջադիմութիւնը, այն ժամանակը ծագեց ազգերի այն զրութիւնը, որուն վերայ կանգնած են այժմ երկրագնդի ամենէն բարձր ժողովրդները։

Արդ՝ այս նկատմունքներէն կ'հետեւի թէ՝ ազգի մը՝ բարոյական կապերը հաստատուն և հիմնաւոր խարիսների վերայ պնդացնելով՝ իրան անվտանգ և օրինաւոր կերպով առաջ վարելու համար, բաւական չ'են նիւթական և բարոյական լուսաւորութեանց ըլլալը, Մեր նախնիք կրօնական լուսաւորութեան կատարելագոյն կէտը ժամանեցին. նութականին մէջն ալ նոյնպէս յետ չ'կին։ Սակայն ի՞նչի չ'թողիցին մեզ — իրանց ապագայ սերունդին ինչ որ այժմ ամենէն բարձր անձինք կ'պահանջնեն։

Այս պակասութեան օրինաւոր առիթը մուտքական կենաց յառաջավմնութեան թերութեանը կ'տանք։ Իսկ ինչ որ կ'վերաբերի նիւթական կենաց ապահովացնելու միջոցներուն, որուն վերայ մանրամասն խօսելն երկար կը լինէր, կարծ ասելով կարող ենք առարկել թէ երբ մի ժողովրդի բարոյական և մտացական կենաց ընթացքը օրինաւոր կերպով առաջ վարուի, հարկ է որ նոյն ժողովուրդի նիւթական կենաց ապահովացնելու մի ջոցներն ալ բայտ այնու կատարելագործուեին։

Աչաւասիկ սորանք են մասնաւոր ձևով ճառելով մի ժողովուրդի բարոյական կապերի հիմնական կէտերը, որոնց ամենքն աղ պիտոյ է միևնույն հոգացողութեամբ առաջ վարուի։ Սակայն որով հետեւ մենք քաղաքական կեանք շունինք, ուստի առանձին կերպով մերոնց զիտմամբ նկատելով հարկ է առարկել թէ զորանց առաջին տեղը պիտի բռնէ հոգեկան լուսաւորութիւնը կամ կրօնը, որ պիտի ըլլայ միւս երկուսի հիմանց խարիսխուր։

Իրաւ շատ անգամ ասուած է թէ կրօնական լուսաւորութեան հիմնական կէտերը բոլոր աշխարհների համար միւնույն է և միւնույն հաստատութիւն ունի։ Բայց այօչափ ալ այդպէս կարծուի, այնուամենայնիւ այլեայլ ձևերով, տարագներով, մոքերով, զգացմունքներով, սփոհալ և տարածեալ են ազգաց մէջ։ Ուստի և այս իսկ առիթով է, որ իւրաքանչիւր ազգ իրան յատկացած վարք բարի սովորութիւն, ծէս, արարողութիւն, կարգ, կանոն, օրէնք և լեզու ունի, արտագրողբնութեան հզօր և ազգու զօրութիւնն է։

(Ենացորդն է յաջորդ աշակերտը։)

ԱՊՆԵՔՍԱՆԴՐ ԿԵՑՄՐ Ի ՏՓԽՒՅ։

Ի 20-ն ամսոյս ընդ երեկոս Տփխիս քաղաք արժանացաւ հիւրընկալնուելզՕգոստ։ Եղեքսանդր Ռ. Կիկոլյայեվիչ Կայսրն ամենայն Ռուսաստանեայց՝ ընդ Կայսերորդուցն Գաահամառանգ և մէծ իշխան Առմափառ Եղեքսանդր Եղեքսանդրովչի և ընդ մէծ իշխան Ասեմափառ Ալաղիսիրի